

Հրանտ Աբրահամյան

ԱՐՑԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ (1855-1876 թթ.)

**Թիֆլիս, Սարգիս Ջալալյան, Շուշի, Պետրոս Շանշյան, հայոց եկեղեցի,
Արցախ, Դանիել Շահնազարյան, ազգային դաստիարակություն,
առաջադիմություն, Արցախի թեմ, եկեղեցի**

19-րդ դարի կեսերից սկսած Արցախում տնտեսության զարգացման հետ միասին սկսում է աշխուժանալ հասարակական կյանքը, մանավանդ Շուշի քաղաքում: Ընդհանրապես երկրամասում թե՛ հասարակայնության և թե՛ հոգևորականության իրավունքները սահմանափակված էին¹: Թիֆլիսում, որտեղ կենտրոնացված էին Անդրկովկասի հասարակական-քաղաքական մեծ թվով հայ ներկայացուցիչներ, դժգոհ էին ռուսական քաղաքականությունից: Նրանց գլուխ էին կանգնած Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանը² և Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Ալեքսանդր Թայիրյանը: Դարի կեսերին թե՛ Թիֆլիսում և թե՛ Շուշիում հանդես են գալիս տարբեր բնույթի կազմակերպություններ: Օրինակ, Թիֆլիսում ստեղծված ուսանողների կազմակերպությունը ղեկավարում էր Պետրոս Շանշյանը: Նա Թայիրյանի հետ միասին առաջարկում է Անդրկովկասի հայության շրջանում իրագործել մի շարք բարեփոխումներ: Ակնհայտ է, որ ցարական կառավարությունը չէր կարող բավարարել նրանց պահանջները:

1854 թ. Ներսես կաթողիկոսը Պետրոս Շանշյանին նշանակում է Ներսիսյան դպրոցի տեսուչ, չնայած չէր ընդունում նրա մի շարք հայացքները: Այնուամենայնիվ, Շանշյանին այդ պաշտոնում նշանակելը առաջադիմական քայլ էր և կարևոր իրադարձություն: Նրան հետևող երիտասարդության շրջանում նկատվում էր աշխուժություն: Աշխուժություն էր նկատվում նաև Շուշիում, որը դառնում էր «այն հայաբնակ վայրը, ուր առավելապես արմատներ էր բռնում նույն սահմանադրական շարժումը»: Դավկայում է նաև Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանը իշխան Բարատինսկուն ուղարկած վերոհիշյալ բողոքում: Նա գրել է. «Սրբազանակատար Ներսեսի մահից յետոյ, երբ ես մտայ Թիֆլիզի թեմի կառավարութեան մէջ, վերոյիշեալ ընկերութիւնը աւելի բացարձակ կերպով սկսեց գործել: Իր նախագծերի համաձայն, ճիւղաւորուելով երկրի

¹ Լեւոն Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 233:

² Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանը ծնվել է Թիֆլիսում, 1810 թվականին: Դեռևս 40-ական թվականների սկզբին լինելով Սանահինի վանուց միաբանության մեջ՝ շրջել է ամբողջ Արևելյան Հայաստանը և 1842 թ. Թիֆլիսում հրատարակել «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» աշխատության Ա մասը: Այդ աշխատանքի Բ մասը հրատարակվել է նույնպես Թիֆլիսում 1858 թվականին: Արդեն այդ ժամանակ նա հանդիսանում էր «Վրաստանի, Հայոց Իմերեթի և այլոց» արքեպիսկոպոս: Լինելով մեծ հայրենասեր՝ այնուամենայնիվ ուներ հակասական հայացքներ:

զանազան կողմերում, մանաւանդ Ղարաբաղում, ուր նրանք կարողացան ձեռք առնել և իրանց կանոններին ենթարկել տեղացի հոգևոր դպրոցը»¹:

Այդ ժամանակ ի՞նչ էր տեղի ունեցել Շուշիում, որը համդիսանում էր Անդրկովկասի տնտեսապես զարգացած, առևտրական և մշակույթի կենտրոններից մեկը: Թիֆլիսից և Կ. Պոլսից նոր, թարմ, մանավանդ սահմանադրական գաղափարներ էին թափանցում այստեղ և երիտասարդությանը, մանավանդ մտավորականությանը դրդում դեպի առաջադիմական գործողություններ: Թերևս առաջին կարևոր քայլը քաղաքում մշակույթի նոր օջախների բացումն էր: Այդ ժամանակ Շուշին լայն կապեր ուներ ռուսական բազմաթիվ քաղաքների, մանավանդ Մոսկվայի հետ: Լայն կապեր ուներ նաև արտասահմանյան շատ քաղաքների հետ: Անշուշտ, այդ տեղերից նոր, առաջադիմական հոսանքներ էին թափանցում Շուշի: Որոշում են համանման գրադարան բացել Շուշիում: Այդ գաղափարն իրականացնելու համար ստեղծվում է մի ընկերություն, որն իր վրա է վերցնում քաղաքային գրադարան բացելու պատասխանատվությունը: Գրադարանի բացման համար կազմվում է կանոնադրության նախագիծ և ներկայացվում Անդրկովկասի փոխարքա Բարատինսկու հաստատմանը: Փոխարքան այն հաստատում է՝ մեծ ուրախություն պատճառելով քաղաքի մտավորականությանն ու երիտասարդությանը: Հասարակական առաջադեմ ուժերի նախաձեռնությամբ գրադարանի բացումը առաջին իրադարձությունն էր, որը մեծ արձագանք գտավ: Նման հասարակական հիմնարկություն Անդրկովկասում չունեին նույնիսկ Թիֆլիս քաղաքը: Գրադարանի կանոնադրության համաձայն ստեղծվում է գրադարանի վարչություն, որը իրավունք ուներ հրավիրել ընդհանուր ժողովներ, որտեղ կարող էին լսել վարչության հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին: Շուշիի քաղաքային գրադարանը անվանում են նաև «Թանգարան վերածնութեան»: Գրադարանի բացման ժամանակ նրա կառավարիչներից Ավետիս Բահատրյանը արտասանած ճառում նշել է, որ այս ընկերությունում ամեն մեկը կգտնի «իրան ախորժակին յարմար գրուածքներ, կը կարդացուին հրապարակական ճառեր, հետաքրքրական հատուածներ, էստեղ ընկերի հետ կը խոսակցեն, կը լսեն, կը դատեն, կարծիքները կը շփուին իրար և կը միանան էստե՛ղ նախ մեր ժողովրդի տարանջատ անհատներն իրար հետ և ապա կարգերի հետ կը ծանոթանան, կը ներձենան, հաղորդակցութիւնը կը հեշտանայ, ընկերական կապերը կամրապնդին, նոր բաները սրընթաց փոթորիկի նման շուտով կը սփռուին, ազգային լուրերը վսեմ կերպարանք կը ստանան և էն ժամանակ մեր մեծի ու փոքրի սրտերի մէջ ծագած կը լինի մի էլեկտրական թել, այնպես, որ եթէ միզանից որ մէկին դիպչելու լինիս, արձագանքը կը կրկնուի ամենիս սրտերի մէջ»²:

Այդ գաղափարները, ըստ էության, նոր չէին. դրանք կային նաև Ներսես Աշտարակեցու և նրան հաջորդած Մատթեոս Չուխաճյանի ժամանակ: Ներսես կաթողիկոսը իր մահից քիչ առաջ, 1856 թ. օգոստոսի 18-ին, Ղարաբաղի կոնսիստորիա ուղարկած կոնդակում գրել է. որ ինքը իր վաթսունամյա պաշտոնավարության ընթացքում մի

¹ Տես՝ Լեօ, նշվ. աշխ., էջ 238:

² «Կռունկ հայոց աշխարհին» (այսուհետև՝ «Կռունկ»), Թիֆլիզ, 1860, էջ 570:

շարք կաթողիկոսական տեսուչների հետ միասին հանգել են նրան, որ հոգևորականների խարդախություններին վերջ տալու և ժողովրդի հարազատ սրբերի պատվիրանները կատարելու համար նպատակահարմար են գտել բոլոր թեմերում նշանակել աշխարհական գործակալներ¹:

Լեոն շեշտում է, որ իր բազմամյա փորձն էր, որ Ներսեսին հարկադրեց աշխարհական գործակալներ նշանակել բոլոր թեմերում: Օրինակ, Շուշիում նշանակեց Չամբարձում աղա Չախումյանին և Մահտեսի Յովհաննես Յարամիշյանին: Այս երկրորդը Ղազանչեցոց եկեղեցու երեսփոխն էր: Երկուսն էլ խորհրդակցական ծայնի իրավունքով ներկա էին լինում կոնսիստորիայի նիստերին և ստորագրում նրա վճիռները: Գիշտ է. կոնսիստորիաներում աշխարհիկ տարրի մասնակցությունը վաղուց գոյություն ուներ, սակայն Ներսես կաթողիկոսի կոնդակով այն «ավելի խստապահանջ անհրաժեշտություն էր դարձել»: Աշխարհիկ ներկայացուցիչներին նշանակում էր ինքը՝ Ներսես կաթողիկոսը, որ առաջին անգամ իրագործեց Շուշիում²:

Այս իրադարձությունների ժամանակ (1859 թ.) Արցախի թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանի դեմ բողոք է ուղարկվում Էջմիածին՝ Մատթեոս կաթողիկոսին: Մինչև բողոքը կատուգվեր, Մատթեոս կաթողիկոսի հրամանով աշխատանքից հեռացվում է Գևորգ Վեհապետյանը: Բողոքը ստուգելու համար Շուշի է ուղարկվում Դանիել վարդապետ Շահնագարյանցը³: Բողոքի հեղինակները հոգևորականներ էին և հասարակության ներկայացուցիչներ: Նրանք գտնում էին, որ Շուշիի թեմական դպրոցը, որ բացվել էր 1838 թվականին, չպետք է լինի կոնսիստորիայի ղեկավարության ներքո: Նույն թվականի աշնանը Շուշիում տեղի է ունենում հասարակական ժողով, որը կաթողիկոսին խնդրում է, որ Շուշիի թեմական դպրոցին տրվի Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կարգավիճակը: Այդ ժողովում ընտրվում է մի հանձնաժողով, որ ընդունված որոշումը ներկայացնի Մատթեոս կաթողիկոսին: Կաթողիկոսը շուշեցիների այդ նամակին պատասխանում է մի երկար կոնդակով, որին Շուշիի հասարակությունը պատասխանում է ջերմագին շնորհակալական հանրագրով: Ըստ էության Մատթեոս կաթողիկոսը համաձայնվել էր թեմականը դուրս բերել կոնսիստորիայի ենթակայությունից և այն ղեկավարելու համար ընտրել հոգեբարձուների խորհուրդ:

1860 թ. հունվարի 24-ին Շուշիում տեղի է ունենում հասարակական ժողով, որը վարում էր վերոնշյալ Դանիել Շահնագարյանցը: Ժողովը դպրոցի համար ընտրում է հոգաբարձուների խորհուրդ: Դա նորություն էր Արցախի թեմականի պատմության մեջ: Հոգաբարձուներ են ընտրվում Աբրահամ բեգ Մաղաթյանը, Չամբարձում աղա Չախումյանը, Աբրահամ Խանդամիրյանը, Սարգիս Մաղաթյանը, Նուխիից՝ Յովհաննես բեգ Էլչիբեկյանը:

¹ Տես՝ Լեո, նշվ. աշխ., էջ 240-241:

² Նույն տեղում:

³ ՀԱԱ, ֆ. 56, ց.1, գ.3888: Այդ գործը անվանված է «Ղարաբաղի թեմական առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանի վարքի մասին (1859-1860թթ.):»: Գործը բաղկացած է 133 թերթից:

Շատ կարևոր էր թեմականի եկամտի աղբյուրների հաստատման հարցը: Երբ հոգեբարձուների խորհուրդը կոնսիստորիայից ստանում է եկամտի աղբյուրների ցուցակը, պարզվում է, որ դրանք շատ քիչ էին: Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանի օրոք եկամտի 14 աղբյուր կար: Կաթողիկոսին խնդրում են հաստատել եկամտի աղբյուրների ցուցակը: Նա կրկին հաստատում է եկամտի աղբյուրների և ընտրված հոգաբարձուների ցուցակները:

Ի վերջո, 1860 թ. սեպտեմբերին Շուշիի թեմական դպրոցը հանձնվում է հոգաբարձուների խորհրդին: Կոնսիստորիան այլևս ոչ մի դեր չունեի թեմականի կառավարման գործում: Այսպիսով, Շուշիի հասարակությունը տարավ փայլուն հաղթանակ, որը լիովին բխում էր ժողովրդի շահերից: «Կռունկը» 1861 թ. անդրադարձել է Շուշիի թեմականը կոնսիստորիայի կառավարումից հանելու և հոգեբարձուների խորհրդի տնօրինությանը հանձնելու հարցին: 1861 թ. թիվ 2-ում «Ազգային կրթութիւն եւ տեղեկութիւն Ղարաբաղու յառաջադիմութեան վերայ» վերատառությամբ Ներսես Աթաբեկյանի հոդվածում ասված է. «Ղարաբաղցիք արդէն քանի տարի է զգում են իրենց պակասութիւնները, ցանկանում են ունենալ հայութեանում կրթուած որդիք և թէպէտ ժամանակ առ ժամանակ սկսում են մտածել այս բարի դիտավորութեան վերայ, բայց կրկին խորասուզվում էին առաջադեմութեան մէջ, ուրեմն անջնջելի տառերով պէտք է գծագրուի մեր և ապագայ սերնդոց սրտումն Արժանընտիր ՄԱՏԹԵՈՍ Զայրապետի անունը, որովհետև քաջ Զովին շնորհալի կոնդակներով ի 15 Յունիսի անցեալ 1860 թվականի վառեց Ղարաբաղցոց սիրտը ուսումնասիրութեան անշէջ հրով: Այն յաւերժայիշատակ կոնդակների զօրութեամբ բազմատեսակ արդիւնաւոր աղբիւրներով հարստացաւ տեղույս Զոգևոր Դպրոցը, հաստատուեց Զոգաբարձութիւն, հաստատուեցին համաձայն ժողովրդի ընտրութեան հինգ արժանաւոր Զոգաբարձու, որ նոքա հոգան Դպրոցի ամենակերպ ճոխութեան և հարատեւութեան համար»¹: Զանդեսի այդ համարում տպագրված է նաև Զովիաննես բեգ Բահատրյանի արտասանած ճառը², ինչպես և երրորդ դասարանցի Զովակիմ Թամիրյանի երախտագիտական խոսքը³ ու Զարություն քահանա Մելքոնյանի նամակը⁴: Նույն թվականին հանդեսի Դ համարում Շուշեցի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը թեմականի կանոնադրությունն ընդունելու առթիվ գրած հոդվածում պատմում է, թե ինչպես Զամբարձում Զախումյանը գնացել էր կաթողիկոսի մոտ, նրան հանձնել շուշեցիների խնդրագիրը: Նա համաձայնվեց կոնդակը ստորագրել թեմականը կոնսիստորիայի հսկողությունից դուրս բերելու վերաբերյալ: Նամակի հեղինակը ջերմորեն պաշտպանում է հոգեբարձուների խորհրդի ստեղծման գաղափարը: Նա իր նամակն ավարտում է այսպես. «Ես և ինձ մեծ ուրախութիւն է պատճառում էսպիսի ուրախառիթ լուրերով ուրախացնել մեր համայն ազգային սիրովը վառուած սրտերը»⁵:

¹ «Կռունկ», 1861, թ. 2, էջ 467:

² Նույն տեղում, էջ 472-473:

³ Նույն տեղում, էջ 473-474:

⁴ Նույն տեղում, էջ 474-481:

⁵ Նույն տեղում, թ. Դ, էջ 301:

Քնորզ եպիսկոպոս Վեհապետյանը սահմանադրական գաղափարախոսության կողմանկից էր: Շուշիում սահմանադրության կողմնակիցներ քիչ չկային: Հասարակական այդ ընկալումը դիտվում էր որպես առաջադիմական քայլ: Մինչդեռ Վեհապետյանի գործերը ստուգող Դանիել վարդապետ Շահնագարյանցը հակասահմանադրական գաղափարախոսության կողմնակից էր, ասել է թե՛ հակավեհապետական:

Վեհապետյանին թեմակալության վերջին շրջանում պաշտոնագրել էին կոնսիստորիայի անդամները՝ քարտուղարը և գործակալները: Նրանց փոխարեն նշանակվել էին նորերը, որոնց մեջ կային սահմանադրության կողմնակիցներ: Շուշիում սահմանադրականները ժողովներ էին գումարում հասարակական գրադարանում: Այդ ժողովների ժամանակ քարոզվում էին Ստեփանոս Նագարյանի, Միքայել Նալբանդյանի, Պետրոս Շանշյանի և այլոց գաղափարները:

Շուշիի հասարակական կյանքի և քաղաքական միտումների զարգացման ոլորտում էական նշանակություն ուներ հայ երիտասարդության ազգային դաստիարակության հարցը: Շուշիից Մատթեոս կաթողիկոսին ուղարկված վերոնշյալ հանրագրում ասված է. «Մակունք մերոց հայրենեաց, առաքեալք յօտար ազգս և ի լեզուս արտաքոյ ծոցոյ մօր իւրեանց Հայաստանի և կրթեալի ընդ տեսչութեամբ այլոց ազգաց, օր աուր մերկանան զազգային հոգի և զգեմուն զօյարին ըստ բանի և հաւատոյ, և՛ կրօնի և՛ լեզուի և ընդհանրապէս ազգասիրական և հայրենասիրական եռանդեան»¹:

Հայ ազգի նվիրյալները ջանքեր չէին խնայում բարելավելու ազգային դպրոցի վիճակը և հասնելու նրան, որ հայ երիտասարդությունը զնա և բարձրագույն կրթություն ստանա «լուսաւոր տերութիւնների համալսարաններում» ու վերադառնա հայրենիքը և, ինչպես կասեր շուշեցի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը «Կռունկին» ուղարկած վերոհիշյալ նամակում, «լքցնեն և համբարեն ամենայն մասամբ հայրենեաց շտեմարաններն, ինչպես երբեմն մեր սուրբ նախնիքն էին Արծնքից վերադարձած»²:

Շուշիում եթե սահմանադրականների թիվն ավելանում էր, ավելանում էր նաև հակասահմանադրականների թիվը: Այս վերջինները պատրաստ էին պայքարել ամեն մի առաջադիմական մտքի դեմ և ժողովրդից ետ խլել նրանց տրված իրավունքները՝ թե՛ գրադարան-ընթերցարանի բացման, թե՛ թեմականը հոգաբարձուների խորհրդին հանձնելու և էլի նման հարցերում: Այդ հետադիմական հայացքների դեմ տարվող պայքարում էական դեր էր խաղում թեմականի կանոնադրության ընդունումը:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ արցախցիները միայն պահանջող չէին և պատրաստ էին նվիրատվությունների միջոցով մեծացնել թեմականի եկամտի աղբյուրները: 1861 թ. մարտին հասարակական գրադարանում տեղի ունեցած ընդհանուր ժողովում որոշվեց երկրամասում նվիրատվություն կազմակերպել թեմականի օգտին: Դա լիովին թույլատրվում էր թեմականի նորանշակ կանոնադրությամբ, որը պետք է հաստատվեր կաթողիկոսի կողմից: Գրադարանում տեղի ունեցած վերոհիշյալ ժողովում ընտրվում է հինգ հոգուց

¹ Լեօ. Աշվ. աշխ., էջ 247:

² «Կռունկ», 1861, թ. Դ, էջ 299:

բաղկացած մի պատվիրակություն, որը պետք է էջմիածին տաներ վերամշակված կանոնադրությունը: Մատթեոս կաթողիկոսը Շուշիի թեմականի եկամուտների ցուցակը հաստատելիս, մի մասը կրճատում է: Այս անգամ էջմիածին մեկնած հանձնաժողովին հաջողվում է կանոնադրության հետ միասին վերահաստատել տալ եկամուտների լրիվ ցուցակը: Էջմիածնի սինոդը 1961 թ. ապրիլի 12-ին հաստատելով Շուշիի թեմականի կանոնադրությունը՝ ոչ մի փոփոխություն չմտցրեց և անաղարտ թողեց «ինքնավար դպրոցական հաստատութեան կերպարանքը»¹: Դա Շուշիի առաջադեմ ուժերի փայլուն հաղթանակն էր: Ժողովուրդը մեծարում էր իր սեփական գործի հաղթանակը, նա դարձել էր իրավատեր, նա նոր իրականություն էր «մտցնում հայկական կյանքի մեջ»²:

Ելնելով Շուշիի թեմականի կանոնադրության պահանջներից՝ 1961 թ. մարտին Շուշիում անց է կացվում նվիրատվություն հօգուտ թեմականի: Օրինակ. Համբարձում Հախումյանը նվիրաբերում է 2000 ռ., Բաբա Բեգլարյանը և Պետրոս Աղամալյանը՝ 1000-ական ռուբլի, Գաբրիել Աղամյանը՝ 500 ռ.: Միայն Շուշի քաղաքում հավաքվում է 9716 ռուբլի³:

Շուշիի թեմականի հոգաբարձուների խորհուրդը հասարակական լայն աշխատանք է ծավալում դպրոցի հեղինակությունը բարձրացնելու համար: Հոգաբարձուների խորհրդի կարևոր քայլերից էր Պետրոս Շանշյանին թեմականի տեսուչ հրավիրելու հարցը: 1963 թ. հոկտեմբերի 1-ին Մատթեոս կաթողիկոսը Պետրոս Շանշյանին հաստատում է Շուշիի թեմականի տեսուչ: Կաթողիկոսի այդ քայլը, ինչ խոսք, տեղի է ունեցել ոչ թե նրա կամքով, այլ հոգաբարձուների և Համբարձում Հախումյանի ու Շուշիում նույնպես հեղինակություն ունեցող Հարություն Շխեյանի խնդրանքով: Շանշյանը Պետերբուրգից ժամանում է էջմիածին, ստանում կաթողիկոսի կոնդակը, ուղևորվում Շուշի: Ուսումնարանի տեսչության պաշտոնը նա ստանում է Ներսես Աթաբեկյանից, անմիջապես անցնում է գործի՝ իրագործելով բազմաթիվ բարեփոխումներ: Նախ և առաջ վերացնում է ծեծը: Նրա օրոք ուսումնարանն անվանվում է «Եղիշեան Ազգային Հոգևոր դպրոց»:

Շանշյանի իրագործած բարեփոխումները հակաառաջադիմական ուժերի սրտով չէր: Նրանք բազմաթիվ բողոք-մամակներ էին ուղարկում էջմիածին՝ Մատթեոս կաթողիկոսին, ու հարց դնում Շանշյանին ազատել տեսչի պաշտոնից: Կաթողիկոսը 1864 թ. ամռանը Ստեփանոս արքեպիսկոպոսից պահանջում է Շանշյանին հեռացնել իր պաշտոնից: Փաստորեն Շանշյանը դառնում է ոչ առաջադեմ ուժերի զոհը: Այդ նույն թվականի նոյեմբերին Շուշիի բնակչությունը մի հանրագիր է ուղարկում կաթողիկոսին, որում պաշտպանում է Շանշյանին և խնդրում նրան վերականգնել իր պաշտոնում: Շուշեցիների հանրագրում ասված է. «խնդրում ենք, վեհափառ Տէր, որ մեր որդիական սիրով առաջարկուած Գործքը ընդունէք, ինչպես վայել է հոգևոր Հօր, թողնէք մեր ուսումնարանը իրան յառաջադէմ ընթացքի մէջ և շնորհէք

¹ Լեօ, նշվ. աշխ., էջ 250:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 266:

հասարակութեանը իրան անդորրութիւնը և խաղաղութիւնը ազատելով նրան անբարեմիտների դաւաճանութիւններից և բնաւ ունկն չմատուցանելով անստորագիր գրախօսութիւններին, այժմ և յաւիտեան»¹: Էջմիածին բողոքելու են գնում շուշեցիների հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն, մի շարք հոգևորականներ, աշակերտներ և նույնիսկ նոր տեսուչը: Շանշյանին պաշտպանելու համար Էջմիածին գնաց նաև Համբարձում Հախումյանը: Սակայն Մատթոս կաթողիկոսը մնաց անդրդվելի: Թեմականում ղեկավարությունն անցնում է հետադեմ, հակասահմանադրական հայացքներ ունեցողների ձեռքը: Թե ինչու Մատթոս կաթողիկոսը ընդառաջեց հակասահմանադրական գրպարտիչներին, մնում է անհասկանալի: Շուշեցիները կաթողիկոսին նոր բողոք են ուղարկում 1964 թ. դեկտեմբերին, որը դարձյալ օգուտ չի բերում: Մինչ այդ Շանշյանի կողմնակիցները 1964 թ. հունիսի 10-ին վեհափառին ուղարկած հանրագրում մշել էին, որ պետք է Շանշյանին թողնել իր պաշտոնին, իսկ գրպարտողներին ամոթանք տալ²:

Պետրոս Շանշյանի տեսչության տարիներին՝ 1864 թ. ծնռանը, Շուշիում ստեղծվել էր կանանց մի կազմակերպություն, որի անդամներից յուրաքանչյուրը պետք է տարեկան մուծեր վեց ռուբլի անդամավճար: Այդ ընկերության անդամների թիվը հասնում էր 40-ի: Ընկերության նախագահ Մարիամ Հախումյանը առաջադեմ հայացքների տեր կին էր: Նա ընկերության անունից 1964 թ. փետրվարի 27-ին Ղարաբաղի թեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսին գրել է. «Ես Շուշուայ քաղաքի տիկնանց կողմանէ՝ դիմում եմ ձեր սրբազնութեանը և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալ օրիորդաց համար Սուրբ Մարիամու անունով Ուսումնարան, արժանացնելով ընդունել Ուսումնարանը ձեր սրբազնութեան բարձր հովանաւորութեան ներքոյ»³: Ստեփանոս արքեպիսկոպոսը անմիջապէս պատասխանում է Մարիամ Հախումյանին: Նա գրում է. «Բարեպաշտուհի Տիկին, ընդունելով ձեր առաջակութիւնը Շուշուայ քաղաքի տիկնանց կողմանէ Օրիորդաց Ուսումնարան բանալու համար, ուրախ սրտիւ գովում եմ ձեր և միւս բարեպաշտուհի տիկնանց ազգասիրական ճիգն այսպիսի անենահարկաւոր ազգային լուսաւորութեան և յառաջադիմութեան միջոցը յառաջ տանելու համար, ուստի և խնդրելով Ամենակալ Արարչից ձեր ձեռնարկութեանը յաջողութիւն, հաստատում եմ այդ ուսումնարանը համաձայն կարգադրութեան նորին. «Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը» անուամբ և տալիս եմ իրաւունք բանալ այդ ուսումնարանը մեծաւ փութով»: Նաև հաղորդում է, որ «Ղարաբաղու Եղիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի տեսուչ պ. Շանշիյանցը ևս յարգելով իմ առաջարկութիւնն ընկալալ սիրով տեսչութիւնն Օրիորդաց Ուսումնարանում և պատրաստ է կատարել ամենայն յօժարութեամբ»⁴: Պետրոս Շանշյանը սիրով կատարում է օրիորդաց նորաբաց դպրոցի ուսումնական մասի ղեկավարությունը: Բացի

¹ Նույն տեղում, էջ 321:

² Նույն տեղում, էջ 307:

³ Նույն տեղում, էջ 292:

⁴ Նույն տեղում, էջ 296:

այդ, թեմականից շատ ուսուցիչներ ձրի դասավանդում են օրիորդաց ուսումնարանում: Տիկին Մարիամը իրենց բնակարանից հինգ սենյակ է տրամադրում ուսումնարանի համար: Նա ընտրվում է ուսումնարանի տեսչուհի, իսկ կույս Եղիսաբեթ Սիմոնյանը՝ վերակացուհի:

Շուշիի օրիորդաց ուսումնարանը պաշտոնապես բացվել է 1864 թ. ապրիլի 7-ին: Պ. Պռոշյանը իր մի բրոշյուրում ջերմորեն նկարագրել է ուսումնարանի բացման արարողությունը: Ուսումնարանի բացումը ողջունել է նաև թագուհի Օլգա Ֆեոդորովնան¹:

Շուշիում օրիորդաց ուսումնարանի բացումը հանդիսացել է Արցախի հասարակության նոր, փայլուն հաջողություն: Գիշտ է, սկզբում ուսումնարանի սովորողները քիչ էին, սակայն հետագայում շատացան, և նա ունեցավ սեփական շենք: Ուսումնարանը մեծ ուրախություն և ազգային հպարտություն պատճառեց արցախցիներին: Այն Անդրկովկասում եզակի երևույթ էր:

Արցախի թեմը կարիք ուներ ուժեղ, հեղինակավոր թեմակալի: Այդ ժամանակ նման թեմապետ կարող էր լինել վերոհիշյալ Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը՝ չնայած նա, ինչպես նշվել է, իր հայացքներով հակասահմանադրական էր: 1864 թ. վերջին նա գտնվում էր Սանահինի վանքում, երբ իմացավ, որ Մատթեոս կաթողիկոսի կոնդակով նշանակվել է Արցախի թեմի առաջնորդ: 1865 թ. սկզբին Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը անցնում է իր պաշտոնի կատարմանը: Նա թեմը կառավարում է մինչև 1876 թվականը: Գալով Շուշի՝ լիովին նվիրվում է եկեղեցու ազգային պահանջներին և ջանք ու եռանդ չի խնայում նպաստելու հայրենի երկրամասում եկեղեցու ամրապնդմանը և մշակույթի զարգացմանը: Նրա աջակցությամբ 1866 թ. Շուշիում բացվում է հոգևոր ուսումնարան, որը հայոց եկեղեցու համար պատրաստում էր եկեղեցական ծառայողներ: Սարգիս Ջալալյանը քիչ ջանք չի խնայել նաև թեմականի կանոնադրությունը կենսագործելու ուղղությամբ: Որպեսզի ուսումնարանը տնտեսական և ֆինանսական վնասներ չկրեր, նա պահաջում է, որ թեմականում դասավանդող ուսուցիչները, ներառյալ և տեսուչը, սահմանափակ աշխատավարձ ստանան:

Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը ստիպված էր որոշ ժամանակով բացակայել Արցախից, որն, անկասկած, բացասաբար է ազդում թեմի աշխատանքների վրա: Բանն այն է, որ Մատթեոս կաթողիկոսին հաջորդած Գևորգ Դ կաթողիկոսը գտնում էր, որ Էջմիածնի ազդեցությունը Կ. Պոլսի վրա պետք է ուժեղացվեր: Դրա համար անհրաժեշտ էր մի ներկայացուցիչ ուղարկել այնտեղ՝ հարցը լուծելու համար: Գևորգ Դ կաթողիկոսի կարծիքով այդ պարտականությունը կարող էր կատարել Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը, որը Կ. Պոլիս է մեկնում 1868 թ. որպես կաթողիկոսի ներկայացուցիչ: Նա Կ. Պոլիս է հասնում. սեպտեմբերի 13-ին՝ իբրև «լոկ միւռնի բերող եւ նուէր հաւաքող», այլ ոչ որպես կաթողիկոսի ներկայացուցիչ²: Քաղաքական նման հանձնարարություն կատարելու համար Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի համար հեշտ չէր: Ըստ Օրմանյանի բացատրության, Էջմիածնի աթոռը լիովին

¹ Տես՝ «Մեղու Ջայաստամի», 1864, թ. 46:

² Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, հատոր Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4783:

գտնվում էր ռուսական ազդեցության տակ, և կաթողիկոսը կատարում էր նրա հանձնարարությունները: Ռուսատանը փորձում էր Տաճկաստանում իր ազդեցությունը տարածել և ամրապնդել էջմիածնի միջնորդությամբ՝ «որով մրցակից մը կը զօրանար Գաղղից դէմ, որ ուղղակի կաթողիկոսութեան և անուղղակի քրիստոնէութեան պաշտպան էր կանգնած, եւ անով կաշխատեր իր ազդեցութիւնը ընդարձակել և ամրապնդել Թուրքիոյ մէջ»¹: Բայց, հենց էն գլխից «կտրուկ մերժուած է կաթողիկոսական նուիրակի մը Կ. Պոլիս մնալուն խնդիրը, եւ Գետրգի ծրագիրը ձախողած»²: Չնայած դրան, Սարգիս եպիսկոպոսը շարունակում էր մնալ Կ. Պոլսում՝ հույս ունենալով, որ այստեղի «ռուսական դեսպանատունը յաջողի նոր տրամադրութեան եւ նոր որոշման միջնորդ դառնալ, որ անշուշտ պիտի ջանար հակակշռել Գաղղիական դեսպանատան ազդեցութիւնը, սակայն այս կողմէն ալ ակնկալութեանց պարապի ելլալուն վրայ Կ. Պոլիսէ կը մեկնի 1869 յունիս 14-ին հասնելէն ութ ամիս ետքը ել կը վերադառնայ էջմիածին»³:

Փաստորեն լիովին ձախողվում է Սարգիս եպիսկոպոսի առաքելությունը Կոստանդնուպոլսում: Վերադառնալով Շուշի՝ նա որոշ փոփոխություններ մտցրեց թեմականի աշխատանքներում: Նախ՝ կաթողիկոսի համաձայնությամբ երկու քահանա մտցրեց հոգեբարձուների խորհրդի մեջ, ապա որոշեց թեմականի ընդունելություն կատարել սեպտեմբերի 1-15-ը, նախակրթականում ընդունել ութ տարեկանից ոչ պակասներին, առաջին դասարանում ընդունել 14 տարեկան լրացածներին, իսկ երկրորդ, երրորդ դասարաններում՝ 15-16 տարեկան լրացածներին: «Մշակը» գրել է, որ Սարգիս Ջալալյանը ոչ միայն «կենդանացրել է քաղաքիս արու մանկանց ուսումնարանը բայց նաև իգական սեռի դաստիարակութեանը համար կանգնեցրել է մի շքեղ շէնք»⁴: Թերթը նաև նշել է, որ Սարգիս եպիսկոպոսը տեսնում էր, որ դպրոցների համար «վարժապետներ են հարկավոր, բայց Շուշիի մեջ չկան իրենց կոչմանը արժանի վարժուհիք և պետք է նրանց Եւրոպայից բերել»⁵: Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը, գրել է թերթը, «կամենալով իր սեփական ստացուածքը չթողնել ժառանգներին, որ ըստ իւրեանց հաճոյից գործածեն, իր կենդանութեան նուիրեց բարի նպատակի և իր աչօքը տեսաւ յանուն իւր կառուցած շինութիւնը»: «Մենք,– շարունակում է նամակի հեղինակը,– կարծում ենք թէ Սրբազան Արք-Եպիսկոպոս Ս. Ջալալեանին հեռատեսութեան արարքը յարմար է բարի օրինակ լինելու, որ այն սրբազուն հայերն էլ, որոնք թէ իբրև հայրենական ժառանգութիւն, թէ իբրև իրենց ձեռաց ու աշխատանաց արդիւնք ստակ ունեն, դեռ ի կենդանութեան իրենց ձեռքը նուիրական հաստատութիւնք կառուցանելու գործեն»⁶:

¹ Նույն տեղում, էջ 4784:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 4785:

⁴ «Մշակ», ք. 30, 30.08.1873:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

Ակնհայտ է, որ Շուշիի թեմական դպրոցը բացվելուց հետո դարձել էր երկրամասի հայության համար միակ հանրամատչելի կրթական հաստատությունը: Հայության բոլոր խավերը իրենց երեխաներին այդտեղ էին ուղարկում սովորելու: Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը Կ. Պոլսից գալով՝ հանգամանորեն ծանոթացավ իրավիճակի հետ և դժգոհ մնաց թե՛ հոգեբարձուների խորհրդից և թե՛ ուսուցչական կոլեկտիվից, որոնք չեն ջանացել ուսումնարանի աշխատանքների որակը բարձրացնել: Նա ուսումնարանի նոր տեսուչ նշանակեց հայոց լեզվի ուսուցիչ Մաղաք Պուլոյանին, որը երեք տարի(1870–1873 թթ.) վարեց այդ պաշտոնը: Պուլոյանը լինելով հայոց լեզվի բարձրորակ ուսուցիչ, անուրանալի գործ էր կատարել հայոց լեզվի տարածման գործում, սակայն նա կտրված էր հասարակությունից և ոչ մի նշանակալի քայլ չի ձեռնարկել: Ըստ երևույթին նրա այդ պահվածքը ձեռնտու էր Սարգիս եպիսկոպոսին: Սակայն Մաղաք Պուլոյանին փոխարինած Խորեն Ստեփանեն անհաշտ էր Սարգիս Ջալալյանի հաստատած կարգի հետ, ուստի շուտով հրաժարական տվեց և հեռացավ Շուշիից: Թեմապետը ստիպված էր մի առ ժամանակ ինքը վարել թեմականի տեսչության պաշտոնը:

Յոթանասունական թվականների կեսերին Սարգիս Ջալալյանի առողջական վիճակը վատանում է, և բժիշկների խորհուրդով նա հեռանում է Շուշիից: 69 տարեկանում մահանում է Թիֆլիսում (1879 թ. հոկտեմբերի 16-ին): Մահից մեկ տարի առաջ, նա իր վերջին հայրենանվեր գործը կատարեց. 1879 թ. մայիսի 28-ին պատրաստեց և վավերացրեց մի կտակ, որում արտահայտվեցին նրա հայրենասիրական գաղափարները, սերը հայրենի դպրոցի, մշակույթի, տպագրության ու ժողովրդի նկատմամբ:

Օրմանյանի բացատրությունից երևում է, որ նա կտակել է 25 հազար ռուբլի և 2700 օսմանյան լիրա, որ պետք է «յանձնուէր պետկան դրամատան մինչեւ որ 125 տարի անձեռնմխելի մնալով, եւ շահիւր գլուխն բարդուելով 25.000 ռուբլին 12.000.000 ռուբլի գումարի կը հասներ»: Այդ գումարի տոկոսը Լազարյան ճեմարանի վարչության միջոցով պետք է հանձնվեր որոշ հաստատությունների, որոնցից «իւրաքանչիւրը գործածէ ի սեղան փառաց եւ բարօրութեան՝ ապագայ սերնդեան ազգիս Հայոց Լուսավորչականաց»¹: Այդ հաստատություններն էին. Լազարյան ճեմարանը, Մոսկվայի համալսարանը, Էջմիածնի ժառանգավորաց վարժարանը, Արամաշի վանքը, Կ. Պոլսի ժառանգավորաց վարժարանը, Երուսաղեմի ժառանգավորաց համալսարանը, Թիֆլիսի, Երևանի, Շուշիի, Նուխիի, Ախլցխայի, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունները կամ կառավարությունները, Կոստանդնուպոլսի, Ջնյուռնայի, Կարինի, Վանի, Ուլմիայի ազգային վարչությունները, Նոր Ջուղայի հոգևոր կառավարությունը և այլն: Նախատեսված բոլոր ծախսերը պետք է կատարվեին միայն դպրոցների համար և «եղած դպրոցները ընդարձակվելով կամ նոր դպրոցներ բանալով» յանուն բարերայն, եւ «պիտի գործածուին յօգուտ հայազգի և հայադաւան աշակերտաց, բացի Կովկասի քաղաքային կառավարութեանց յատկացուածներէն,

¹ Նույն տեղում, էջ 5122:

որոնք կրնան գործածուիլ ընդհանուր կրթութեան առանց զանազանութեան ազգի և դավանութեան»¹:

Ըստ կտակի, Լազարյան ճեմարանը միշտ պիտի մնար նրա կատարողը, հսկեր գումարի աճը և «Այս կտակով պահուած վարժարաններուն ծրագիրները պիտի կազմողին ժամանակի պահանջմանց համեմատ, բայց հայերէն գրաբարը անհրաժեշտ պիտի ըլլայ միշտ, նոյն ուսումնարաններ պիտի պահեն եւս գիշերօթիկներ էլ, պիտի ունենան տպարան, պիտի հրատարակեն լրագիր եւ գրչագիրներ, ուրիշ պիտանի գիրքեր»²: Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանը իր կտակում հանձնարարում է. «Եթե բաժիններէն որեւէ մէկը անգործադրելի դառնայ, էջմիածնի կաթողիկոսը Երուսաղէմի եւ Կ. Պոլսի պատրիարքներու խորհրդակցութեամբ պիտի կարենայ դարձուցանել զբաժին այն ուսումնարանի յայլ քաղաք կամ վանք»³:

Լազարյան ճեմարանը մինչև 1917 թվականը, մինչև Փետրվարյան հեղափոխությունը, բարեխղճորեն հսկում էր Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանի կտակի իրագործմանը և ժամանակին հրապարակում տվյալները: Կտակի վերջին ժամկետը նշված էր 2005 թվականը: Այդ ժամանակաշրջանում գումարը պետք է հասներ 12 մլն ռուբլու, որից նշված բաժիններից յուրաքանչյուրը պետք է ստանար 20.000 ռ.:

Հրանտ Աբրահամյան, Արցախի հասարակական-քաղաքական կյանքը և հայոց եկեղեցին (1855–1876 թթ.) – Սկսած 19-րդ դարի հիսունական թվականներից Արցախի հասարակական-քաղաքական կյանքը աշխուժանում էր: Այդ ժամանակ իր նվիրական աշխատանքով աչքի էր ընկնում Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանը (1865–1876 թթ.), որը Ջալալյան տոհմի վերջին ներկայացուցիչն էր: Հիսունական թվականների վերջին կարևոր իրադարձությունը Ծուշիում գրադարանի բացումն էր: Այն դարձել էր քաղաքի երիտասարդության և հասարակության հավաքատեղի, որտեղ յուրաքանչյուրը կարող էր արտահայտել իր մտքերը: Կարևոր էր նաև այն, որ Ծուշիի հասարակության պահանջով թեմականի ղեկավարությունը վերցվել է կոնսիստորիայից և հանձնվել նորընտիր հոգաբարձուների խորհրդին:

Грант Абрамян, Общественно-политическая жизнь Арцаха и армянская церковь (1855-1876 гг.) –

19-
(1865-1876 .),

50-

¹ Օրմանեան..., էջ 5121:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Hrant Abrahamyan, Social and political life of Artsakh and the Armenian Church (1855-1876) – Since the half of the fifties of the 19th century social and political life of Artsakh had activated. In this period Primate of the Artsakh Diocese Sargis Jalalyan (1865-1876), who was the last leader of the genus Jalalyan, stood out due to his fruitful work. In the late 50's an important event was the opening of library by the progressive social forces in the economically developed Shushi, which has become commercial and cultural center of the Caucasus. It became a gathering place for the youth and progressive forces of the society, where everyone could freely express his thoughts. An important fact was that diocesan administration of the city was carried out of the jurisdiction of the consistory at the request of the society of Shushi and the Board of Trustees was elected for its leadership in which Catholicos Matteos had an important role.

*Հրանտ Աբրահամյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

